



ԵՂԵԳՆԱԾՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՀԱՍՈՐԱԿԱԿԱՆ ՕՐԻՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Ըստիմյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ [info\\_yechegnadzor@eartus.am](mailto:info_yechegnadzor@eartus.am), [narekbeg@yahoo.com](mailto:narekbeg@yahoo.com)

Ե-07/14

29 Հուլիս

ՀՀ Էներգետիկայի ու բնական պաշարների նախարար  
Երվանդ Զախարյանին  
Եղեգնաձորի Օրիուս կենտրոնի համակարգող  
Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զախարյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրիուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրիուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

Վայոց ձորի մարզում շահագործվող հանքերի քանակի, դրանց տեսակների, շահագործման եղանակների ու շահագործող իրավաբանական անձանց անվանումների վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրիուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյան